Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒՆ

2018 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի իրականացրած աշխատանքների վերաբերյալ

№	Միջոցառումները	Ակնկալվող արդյունքը	Արդյունքի ցուցանիշը	Պատասխանատու կատարողը	Համակատարողը	Ֆինանսական աղբյուրը
1.	Հանրային իրազեկում	Երեխայի հանդեպ բռնության երևույթի նկատմամբ հասարակության կողմից անհանդուրժողական վերաբերմունքի ձևավորում	Մարզի կրթական հաստատություններում, առողջապահական հիմնարկներում, համայնքներում ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության տարածքային բաժինների ԱԳ և ԸԲԿ խմբերի հետ ԸԿԵԻՊ բաժնի մասնագետը մասնակցել է ընտանեկան բռնությանը նվիրված զրույցներին և հանդիպումներին: ԸԿԵԻՊ բաժինն աջակցել է <<Կանանց ռեսուրս կենտրոն >> ՀԿ-ին մարզի մի շարք համայնքներում բնակչության, կանանց և երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ քայլարշավի իրականացմանը:	ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության տարածքային բաժիններ ՀԿ-ներ	ՏԻՄ-եր Մարզպետարանի ԸԿԵԻՊ բաժին Ուսումնական հաստատությունների և հիմնարկների տնօրեններ	ՀՀ պետբյուջե և ՀՀ օրենքով չարգելված ֆինանսական այլ աղբյուրներ
2.	Համագործակցություն ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության տարածքային բաժինների հետ	Հանցագործությունների կանխարգելում և պրոֆիլակտիկ աշխատանք՝ կրկնահանցագործության բացառում	ԸԿԵԻՊ բաժինը անչափահասների գործերով տեսուչների հետ կրթական հաստատություններում, համայնքներում մասնակցել է <<Անչափահասը և հանցագործությունը >>, <<Ընտանեկան բռնություն >>, <<Վնասակար սովորույթներ >> թեմաներով զրույց – զեկույցներին: 2018 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ պրոֆիլակտիկ հաշվառման մեջ է գտնվում 4 իրավախախտ: ԸԿԵԻՊ բաժինը մասնակցում է	ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության տարածքային բաժիններ	ՏԻՄ-եր ԸԿԵԻՊ բաժին	ՀՀ պետբյուջե և ՀՀ օրենքով չարգելված ֆինանսական այլ աղբյուրներ

			իրավախախտ անչափահասների հետ իրականացվող քննչական գործողություններին: Ոստիկանության հետ արդյունավետ համագործակցության շնորհիվմարզում մուրացիկ, թափառաշրջիկ երեխաներ չկան :			
3.	Բռնության ենթարկված անձանց, այդ թվում երեխայի պաշտպանությանն ուղղված ուղղորդման և տեղավորման աշխատանքներ	Բռնության դեմ կանխարգելում	Իրականացվել է բռնության ենթարկված ընտանիքի մոր և երեխաների ուղղորդում և տեղավորում ՀՕՖ – ի երեխայի աջակցության կենտրոն / 1երեխա /, << Լայթ հաուս Արմենիա >> ԲՀ, մայր և 2 երեխա/ և ՍՕՍ մանկական գյուղ / 2 երեխա /, ծնողական իրավունքի վերականգնում /5 ընտանիք/: Մարզպետարանի ԸԿԵԻՊ բաժինը մասնակցում է իրավախախտ և բռնության ենթարկված անչափահասների հետ տարվող քննչական գործողություններին:	ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության տարածքային բաժիններ ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչություն ԸԿԵԻՊ բաժին	ՏԻՄ Մարզպետարանի ԸԿԵԻՊ բաժին ՀԿ-եր	ՀՀ պետբյուջե և ՀՀ օրենքով չարգելված ֆինանսակ ան այլ աղբյուրնե ր
4.	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների սոցիալ-հոգեբանական աջակցություն և խորհրդատվություն	Դժվար վիճակում գտնվող ընտանիքների սոցիալ-հոգեբանական վիճակի բարելավում և իրավունքների, շահերի պաշտպանություն	ԸԿԵԻՊ բաժինը մշտապես իրականացնում է համայնքներում գործող խնամակալության և հոգաբարձության մարմինների և քաղաքացիների խորհրդատվություն: 2018թ. << Դիակոնիա >> ԲՀ-ի կողմից մարզի սոցիալապես անապահով 250 ընտանիք օգտվել է սննդամթերքի օգնությունից, 2 ընտանիք՝ գյուղատնտեսական և սոցիալական աջակցության ծրագրերից(Հորբատեղ, Ագարակաձոր), մանկուց հաշմանդամ 2 երեխա ուղղորդվել է հատուկ կարիքներ ունեցող երեխաների խնամքի	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ԸԿԵԻՊ բաժին առողջապահության և սոցապ. վարչություն	ԽՀՀ-ներ ՀԿ-եր , Բարեգործական հիմնադրամներ	ՀՀ պետբյուջե և ՀՀ օրենքով չարգելված ֆինանսակ ան այլ աղբյուրնե ր

			հաստատություն (Զառիթափ, Եղեգնաձոր), 2 երեխա գիշերօթիկ հաստատությունից վերադարձել է կենսաբանական ընտանիք (Եղեգնաձոր) : Հոգեբանական աջակցության շնորհիվ ուսումն ընդհատած մեկ երեխա վերսկսել է հաճախել դպրոց (Ելփին): Կարիքի գնահատման շնորհիվ 53 ընտանիք ստացել է ֆինանսական աջակցություն մարզպետի հատուկ ֆոնդից:			
5.	Երեխաների շուրջօրյա խնամքի, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտների աջակցություն և խորհրդատվություն	Հաստատության շրջանավարների օրենքով սահմանված սոցիալական կարիքների ապահովում և շահերի պաշտպանություն	Վայոց ձորի մարզից գիշերօթիկ խնամքի հաստատության 2 սան (ք.Եղեգնաձոր) օգտվել են սոցիալական աջակցության տարբեր ձևերից:	ՀՀ Վայոց ձորի մարզպետարան ԸԿԵԻՊ բաժին	ՀԿ-եր	ՀՀ պետբյուջե և ՀՀ օրենքով չարգելված ֆինանսական այլ աղբյուրներ
6.	Թրաֆիկինգի և շահագործման, բռնության ենթարկված անձանց և երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ	Ապահովված է թրաֆիկինգի և շահագործման, բռնության ենթարկված երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնումը	Բռնության ենթարկված կանանց և անչափահաս երեխաներին ցուցաբերվել է սոցիալ-հոգեբանական աջակցություն, վերամիավորվել է 2 ընտանիք (Հերմոն, Եղեգնաձոր) 2 երեխայից առանձին ապրող ծնող դատական կարգով վերականգնել է ծնողական իրավունքը (Մալիշկա, Վայք)	ՀՀ Վայոց ձորի դատաիրավապահ մարմիններ ԸԿԵԻՊ բաժին	ՏԻՄ-եր ՀԿ-եր	ՀՀ պետբյուջե և ՀՀ օրենքով չարգելված ֆինանսական այլ աղբյուրներ
7.	Կյանքի դժվար իրավիճակում հայտնված երեխաներին ժամանակավոր խնամքի տրամադրում	Կյանքի դժվար վիճակում գտնվող երեխաների և նրանց ընտանիքիների թվի նվազում	1 երեխա տեղափոխվել է ՀՕՖ-ի երեխայի աջակցության կենտրոն, 1-ը՝ Կոտայքի ՍՕՍ մանկական գյուղ, 2 մանկահասակ երեխա մոր հետ՝ << Լայթ հաուս>>	ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչություն ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ԸԿԵԻՊ բաժին	Երեխայի խնամքի հաստատություններ	ՀՀ պետբյուջե և ՀՀ օրենքով չարգելված ֆինանսական այլ աղբյուրներ

8.	Կենսաբանական ընտանիք տեղափոխված երեխաների ընտանիքներին բնաիրային օգնության փաթեթի տրամադրում	Կենսաբանական ընտանիքում երեխայի ապրելու և դաստիարակվելու իրավունքի ապահովում	Կենսաբանական ընտանիք տեղափոխված երեխաների ընտանիքներին մարզպետարանը տրամադրել է ֆինանսական աջակցություն, ընդգրկել բարեգործական հիմնադրամների կողմից մարզում իրականացված սննդի ծրագրերին (Դիակոնիա ԲՀ, ՀՕՄ-ի Եղեգնաձորի մասնաճյուղ, Վայոց ձորի թեմ):	ՀՀ Վայոց ձորի մարզպետարան Առողջապահության և սոցապ. Վարչություն Բարեգարծական հասարակական կազմակերպություններ	ՀՀ Վայոց ձորի մարզպետարան ԸԿԵԻՊ բաժին	ՀՀ պետբյուջե և ՀՀ օրենքով չարգելված ֆինանսական այլ աղբյուրներ
9.	Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության գնահատում, խրհրդատվություն	Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների աշխատանքի արդյունավետություն, համայնքներում նրանց դերի բարձրացում	2018 թվականին իրականացվել է Վայք համայնքի վարչական ստուգում, որին մասնակցել է նաև ԸԿԵԻՊ բաժինը: Քննարկվել է համայնքում ոլորտի հետ կապված խնդիրները, արվել է խորհրդատվություն	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն ԸԿԵԻՊ բաժին	Վայքի համայնքի ՏԻՄ	ՀՀ պետբյուջե և ՀՀ օրենքով չարգելված ֆինանսական այլ աղբյուրներ
10.	Երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված երեխաների մասնակցությունն ապահովող միջոցառումների իրականացում	Հասարակության մեջ երեխաների իրավունքների և շահերի վերաբերյալ իրազեկվածության խթանում	Երեխաների աշտպանության միջազգային օրվա առթիվ համայնքներում, կազմակերպվել են ցերեկույթներ, սպորտլանդիաներ, կավճանկարչություն, գեղարվեստի դպրոցների սաների աշխատանքների ցուցադրություն, մանկական երգի և պարի համույթների ելույթներ, տիկնիկային թատրոնի ներկայացումներ:	Վայոց ձորի մարզի ՏԻՄ-եր, կրթական հաստատություններ, մշակույթի օջախներ, գեղարվեստի և սպորտի դպրոցներ, նախադպրոցական հիմնարկներ	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի հարցերով վարչություն, ԸԿԵԻՊ բաժին	ՀՀ օենքով չարգելված աղբյուրներ
11.	Նախադպրոցաան ցանցի ընդլայնում	Նախադպրոցական կրթության կազմակերպման և այլընտրանքային մոդելների ներդրման միջոցով մարզում	2018թ. Մարզի մանկապարտեզների թիվը 17, որից գործում է 16-ը, նախակրթարանների թիվը 17, նախորդ տարվա 14-ի դիմաց:	ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն Վայոց ձորի մարզի կրթական հաստատություններ	ՀՀ Վայոց ձորի մարզպետարան Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի	ՀՀ պետական բյուջե ՀՀ օրենքով չարգելված

		ընդլայնվել է նախադպրոցական ծառայության կազմակերպումը		նախադպրոցական հիմնարկներ		այլ աղբյուրներ
12.	Համընդհանուր ներառական հանրակրթության համակարգի ներդրում	Առողջական խնդիրներ ունեցող երեխաների կրթության ու դաստիարակության կազմակերպում՝ առանց երեխային ընտանիքից անջատելու, ապահովելով նրա ինտեգրումը հասարակությանը	Վայոց ձորի մարզում ներառական կրթություն է իրականացվում 10 դպրոցներում, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թիվը՝ 162	Ներառական կրթության իրավունք ունեցող կրթական հաստատություններ,	Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի հարցերով վարչություն ԸԿԵԻՊ բաժին	ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ
13	Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում	Խոցելի խմբերի երեխաների ազատ ժամանցի և ամառային հանգստի ապահովում	2018 թվականի ամռանը մարզի սոցիալապես անապահով, ծնողազուրկ, զոհված ազատամարտիկների, բազմազավակ ընտանիքների 195 երեխա անցկացրել է իր ամառային հանգիստը Հանքավանի << Հասմիկ>> ճամբարում	Հանքավանի <<Հասմիկ >> ճամբար Կրթական հաստատություններ	ՏԻՄ-եր ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ
14. .	Հաշմանդամ երեխաների առողջության պահպանմանն ու վերականգնմանն ուղղված աջակցության տրամադրում	Մանկուց հաշմանադամ երեխաներին տրամադրվող ծառայությունների մատչելիություն	2018թ. մանկուց հաշմանդամ երեք երեխայի (ծնողի ուղեկցությամբ) տրամադրվել է Ջերմուկի <<Արարատ >> մոր և մանկան ածողջարանի վերականգնողական բուժման ուղեգիր	<<Արարատ >> մոր և մանկան ածողջարան Մարզի բժշկական կենտրոններ	Վայոց ձորի մարզպետարան Առողջապահության և սոցապ. վարչություն	ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ

15.	Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման ուղղությամբ տարված աշխատանքներ	Տարբեր սոցիալական պատճառներով դպրոց չհաճախող երեխաների բացահայտման և դպրոցներում նրանց ինտեգրման գործընթացի իրականացում	Իրականացված բացատրական աշխատանքների արդյունքում մարզում հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ չկան: Կան երեխաներ, ովքեր չեն կարող հաճախել ավագ դպրոց՝ տրանսպորտի բացակայության պատճառով:	ՀՀ համայնքներ, Կրթական հաստատություններ, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	ԸԿԵԻՊ բաժին	ՀՀ օրենքով չարգելված աղբյուրներ
16.	Շուրջօրյա հաստատությունում գտնվող երեխաների, (ովքեր կարիքների գնահատման արդյունքում ճանաչվել են կենսաբանական ընտանիք վերադարձման ենթակա) դուրսբերում այդ հաստատությունների ց և տեղավորում կենսաբանական ընտանիքներում	Շուրջօրյա հաստատությունների բեռնաթափում, երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի ապահովում	<< Փոքր Միեր >> ռազմամարզական մասնագիտացված դպրոցի 2 սան (ք. Եղեգնաձոր) առողջական վիճակի պատճառով վերադարձել են կենսաբանական ընտանիք, այժմ սովորում են Ագարակաձորի միջնակարգ դպրոցում	Խնամքի հաստատություն Առողջապահական կենտրոններ Վայոց ձորի մարզպետարանի ԸԿԵԻՊ բաժին	Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի հարցերով վարչություն	ՀՀ օրենքով չարգելված աղբյուրներ
17.	Երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի վերաբերյալ ՀՀ մարզպետարանի ԸԿԵԻՊ բաժնի աշխատակիցների հետ դասընթացների և կլոր սեղանի կազմակերպում	Ընտանեկան այլընտրանքային խնամքի մոդելների զարգացում	Երեխաների պաշտպանության ցանցը << Խնամատար ծնողների ասոցիացիա >> ՀԿ-ի հետ համատեղ Վայոց ձորի մարզում անցկացրել է հանդիպում << Երեխաների այլընտրանքային խնամքի երեք մոդելների աջակցող սոցիալական ծառայությունների զարգացումը ՀՀ-ում >> ծրագրի շրջանակում, որին մասնակցել են ԸԿԵԻՊ բաժնի , ՍԾՏԳ- մասնագետներ, ԽՀՀ-ի, ոստիկանության և ՀԿ-ի ներկայացուցիչներ	Երեխաների պաշտպանության ցանց << Խնամատար ծնողների ասոցիացիա >> ՀԿ	ՀՀ Վայոց ձորի մարզպետարան ԸԿԵԻՊ բաժին	ՀՀ օրենքով չարգելված աղբյուրներ

18.	Որդեգրման գործընթաց	Ընտանիքում երեխայի ապրելու իրավունքի ապահովում, խնամքի այլընտրանքային մոդելների ներդրում	2018 թվականի ընթացքում Վայոց ձորի 3 քաղաքացի դիմել է մարզպետարանի աշխատակազմ՝ հաշվառվելու որպես որդեգրողի թեկնածու (Եղեգնաձոր-1, Վայք-2): Մեկ դիմումը մերժվել է՝ իրավական հիմքերի բացակայության պատճառով, 2-ը վերցվել են կենտրոնացված հաշվառման: Օրենքով սահմանված կարգով հաշվառված քաղաքացիները հնարավորություն ունեն ստանալ նախընտրած երեխայի վերաբերյալ որոշակի անձնական տվյալներ:	ԸԿԵԻՊ բաժին	Երեխաների շուրջօրյա խնամքի հաստատություններ	Ֆինանսավորում չի պահանջվում:

Վայոց ձորի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների
իրավունքների պաշտպանության բաժին

Կատարող՝Լ.Պողոսյան

Հեռ. 0281 2-06-10